ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #45

Հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր

Ամեն տարի մայիսի 17-ն աշխարհում նշվում է որպես հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր:
1990թ.-ի մայիսի 17-ին նույնասեռականությունը հանվեց ԱՀԿ հիվանդությունների միջազգային դասակարգչի հոգեկան խանգարումների ցանկից:
Ահա թե ինչու է մայիսի 17-ը նշվում որպես հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր:
Այժմ՝ տասնյակ տարիներ անց, աշխարհի շատ պետություններ կատարելագործել են հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի մեխանիզմները և ստեղծել են անվտանգ, ատելությունից ու բռնությունից զերծ միջավայր ԼԳԲՏԻ անձանց համար:
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն յուրաքանչյուր տարի անդրադարձ է կատարում օրվա խորհրդին և կազմակերպում միջոցառումներ՝ ակցիաների, քննարկումների և ասուլիսների տեսքով՝ ԼԳԲՏԻ մարդկանց հիմնախնդիրների վրա հանրային ուշադրություն հրավիրելու նպատակով:

ԷՋ 6

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԷՋ 12

«Հետապնդիր վիրուսը, պաշտպանիր մարդկանց» խորագրով արշավ, ինչին մասնակցություն ցուցաբերեցին Հայաստանում դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական մարմինների, տեղական ՀԿ-երի, համայնքահեն ՀԿ-երի և համայնքների ներկայացուցիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և ակտիվիստներ:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

ԷՋ 5

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՄԻԵԴ-Ի ԿՈՂՄԻՑ ԿՈՄՈՒՆԻԿԱՑՎԵԼ Է ՆՍՀԿ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ. ԴԱՏԱՐԱՆՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՀԱՇՏԵՑՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՈՎ

2021թ.-ի մարտի 9-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) կողմից կոմունիկացվել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի փաստաբան Արա Ղազարյանի կողմից ներկայացված դիմումները՝ Ա. Սահակյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (դիմումը ներկայացվել է 09.08.2016թ.-ին): Ըստ դիմումների տեղի է ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

ՄԻԵԴ-ի կողմից, հաշվի առնելով նախադեպային իրավունքը և պրակտիկան, ներկայացվել է առաջարկ գործի բարեկամական կարգավորման համար, եթե կողմերն ընդունեն ՄԻԵԴ-ի կողմից ուղարկված համաձայնագրի պայմանները, և եթե մասնավորապես Կառավարությունը դիմողներին կատարի դրամական վճարում՝ փոխհատուցելու համար կրած վնասները կատարված ծախսերի հետ միասին:

ՄԻԵԴ-ի կողմից խտրականության մասով անդրադարձ չի կատարվել, քանի որ գործի քննությունը դեռևս ներպետական համակարգում շարունակվում է:

Դեպքի նկարագիրը

17.05.2014թ. www.iravunk.com առցանց լրատվական կայքում «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդված է հրապարակվել, որը հեղինակել է լրագող Հովհաննես Գալաջյանը: Հոդվածում տեղ են գտել Գրիգոր Գևորգյանի, Արման Սահակյանի և Հովհաննես Մկրտչյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող՝ վիրավորող և զրպարտող տեղեկություններ:

«Իրավունքի» կողմից «ցուցակագրված» Գրիգոր Գևորգյանի, Արման Սահակյանի և Հովհաննես Մկրտչյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանի, Հովհաննես Գալաջյանի, iravunk.com ինտերնետային լրատվական կայքում հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդվածը հերքելուն և հրապարակայնորեն ներողություն խնդրելուն, յուրաքանչյուրին որպես պատճառված վնաս 3,000,000.00 ՀՀ դրամ գումար փոխհատուցելուն պարտավորեցնելու, Հովհաննես Գալաջյանի կողմից հայցվորների նկատմամբ դրսևորված խտրականության և ատելության հրահրման փաստը հաստատելու, դատական ակտի եզրափակիչ մասում հայցվորների նկատմամբ խտրականության և ատելության հրահրման փաստի հաստատումը iravunk.com ինտերնետային լրատվական կայքում հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 24.06.2014 թվականի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ: 2015թ. մայիսի 14-ի վճռով դատարանը հայցը բավարարել է մասնակի՝ պարտավորեցնելով պատասխանողներին հրապարակման միջոցով հերքել հոդվածում տեղ գտած արատավորող, վիրավորական արտահայտությունները և հրապարակայնորեն ներողություն խնդրել հայցվորներից: Պատասխանողից հօգուտ հայցվորների նշանակվեց նաև զրպարտության համար փոխհատուցման զգալի գումար: Խտրականության (ատելության խոսքի) մասով հայցը մերժվել է Քաղաքացիական օրենսգրքում նյութաիրավական հիմքի բացակայության հիմքով:

Հայկ Բաբուխանյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.05.2016 թվականի որոշմամբ 14.05.2015 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղազարյանի կողմից դիմում է ներկայացվել ՄԻԵԴ այն բանի համար, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2016 թվականի մայիսի 26-ի որոշումը, որով չեղյալ է հայտարարվել իրենց օգտին կայացված վերջնական վճիռը, խախտում է իրավական որոշակիության սկզբունքը, համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի:

2020թ-ի փետրվարի 13-ին Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի կողմից կայացվել է վճիռ, որով հայցը մասնակի բավարարվել է: Վճռի դեմ հայցվոր և պատասխանող կողմերը վերաքննիչ բողոք են ներկայացրել, որը 2020թ-ի մայիսի 5-ին ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 2021թ-ի նոյեմբերի 16-ին որոշում է կայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ-ի փետրվարի 13-ի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Ընթացքի մասին լրացուցիչ ՆՍՀԿ-ն կլուսաբանի:

ՄԻ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

2020թ.-ի հունիսի 3-ին Ա.Ա.-ն (փոխված է) մի խումբ անձանց կողմից ծեծի ենթարկվելու վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն: ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժնի կողմից 2020թ.-ի հուլիսի 6-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Գործում ներգրավվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը:

2021թ-ի ապրիլի 6-ին ավարտվել է գործով նախաքննությունը և այն ուղարկվել դատարան:

2021թ-ի ապրիլի 15-ին ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վ.Լ. Գրիգորյանը որոշում է կայացրել գործը վարույթ ընդունելու մասին:

Գործով դատական նիստ դեռևս չի նշանակվել:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն հետագա ընթացքի մասին լրացուցիչ կլուսաբանի:

Գործի նախապատմությունը:

2020թ.-ի հուլիսի 15-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ է դիմել ՀՀ քաղաքացի Ա.Ա.-ն: Վերջինս հայտնել է, որ 2020թ.-ի հունիսի 3-ին իր ընկերների հետ գտնվել է Երևան քաղաքի իրենց ամառանոցում: Մի խումբ անձինք հարձակվել են Ա.Ա.-ի տան վրա և հայոյելով պահանջել են հեռանալ՝ կապված Ա.Ա-ի և նրա ընկերների ենթադրյալ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ: Սկսվել է վիճաբանություն, որից հետո այդ անձինք հայհոյելով ձեռքերով, ոտքերով և քարերով հարվածներ են հասցրել Ա.Ա.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ գլխի շրջանում:

Ա.Ա.-ն նույն օրը դեպքի առթիվ հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն, որի հիման վրա նախապատրաստված նյութերով 2020թ.-ի հունիսի 29-ին ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի ավագ հետաքննիչի որոշմամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով և այն ուղարկվել է ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի վարչական շրջանի քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար: ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժնի կողմից 2020թ.-ի հուլիսի 6-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Գործում ներգրավվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը:

Ա.Ա.-ն ճանաչվել է գործով տուժող:

Մեղադրյալներից մեկի՝ Գ.Ս-ի նկատմամբ 2020թ-ի հոկտեմբերի 14-ին նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն: 2021թ-ի մարտի 3-ին ստացվել է փորձաքննության եզրակացությունը, համաձայն որի մեղադրյալը համարվում է սահմանափակ մեղսունակ և ենթակա է քրեական պատասխանատվության:

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՎԱՐԱՐԵՑ ԴԱՏԱԽԱԶԻ ԲՈՂՈՔԸ՝ ԲԵԿԱՆԵՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ

2020թ-ի նոյեմբերի 26-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (Դատարան) Ա.Մ.-ի (անունը փոխված է) վերաբերյալ քննիչ Ա.Ասատրյանի «Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» որոշումը վերացնելու մասին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ (ՆՍՀԿ) փաստաբան Արա Ղարագյոզյանի ներկայացրած բողոքը բավարարել էր՝ վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնելով վերացնել որոշմամբ արձանագրված անձի իրավունքների և ազատությունների խախտումները:

Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք էր ներկայացրել ՀՀ ՀՔԾ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Ա.Մուրադյանը, միջնորդելով բեկանել Դատարանի որոշումը և օրինական ուժի մեջ թողնել քրեական հետապնդում չիրականացնելու և գործով վարույթը կարճելու մասին քննիչի որոշումը:

2021թ-ի մայիսի 7-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում տեղի ունեցավ դատախազի կողմից ներկայացված բողոքի քննությունը: 2021թ-ի մայիսի 10-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հրապարակեց որոշումը, որով բավարարեց դատախազի կողմից ներկայացված բողոքը՝ բեկանվեց Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը:

Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը Կազմակերպությունը դեռ չի ստացել:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը նշում է. «Ցավալի է, այն որ խոշտանգման գործերի արդյունավետ քննությունը անընդհատ նման ձևերով ձգձգվում է: Չնայած այդ ամենին հետևողական է լինելու գործի արդարացի քննության համար»:

ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2021 թվականի մայիսի 6-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի (ՏՀԱԽ) հերթական հանդիպումը: ՏՀԱԽ-ին անդամակցում են Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրներով զբաղվող 5 կազմակերպությունների («Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, «Հանուն հզոր ապագայի» երիտասարդական ՀԿ, «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» իրավապաշտպան ՀԿ) ներկայացուցիչներ և 2 անհատ տրանս* ակտիվիստներ:

Հանդիպման նպատակն էր քննարկել Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի (ՄՀՀ) նորընտիր կազմի առաջին նիստի արդյունքները, ինչպես նաև IBBS-2021-ին ընդառաջ առողջապահության ոլորտում որոշում կայացնողների հետ ադվոկացիոն աշխատանքային հանդիպման անցկացման մանրամասները:

Հանդիպումը անցավ չափազանց ակտիվ և խանդավառ մթնոլորտում: Խմբի անդամները պատրաստակամություն հայտնեցին նույն ոգով շարունակելու աշխատանքները և նպաստելու Հայաստանում տրանս* անձանց հիմնախնդիրների լուծմանը, իրավունքների պաշտպանությանը և տեսանելիության բարձրացմանը:

ԱՐՏԱԳՆԱ ԱԴՎՈԿԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ IBBS-2021-Ի ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՅԱԼ

2021 թվականի մայիսի 20-21-ը Աղվերանում տեղի ունեցավ երկօրյա արտագնա ադվոկացիոն աշխատանքային հանդիպում-քննարկումը տրանս* անձանց շրջանում IBBS-2021-ի անցկացման վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ Առողջապահության նախարարության ներկայացուցիչ Նաիրա Սերգեևան, ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի աշխատակիցներ Հրաչյա Կյուրեղյանը և Մարիետտա Միրզոյանը, «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ աշխատակիցներ, Տրանս* անձանց հայաստանյան աշխատանքային խմբի (ՏԱՀԱԽ) անդամներ: Ադվոկացիոն աշխատանքային հանդիպման առաջին օրը մասնակիցները քննարկեցին տրանս* անձանց կարիքները ՄԻԱՎ-ի կենսաբանական և վարքագծային հետազոտության (IBBS) անցկացման համատեքստում: IBBS-2018-ից հետո իրականացված արդյունքների հետգնահատական-զեկույցի համահեղինակ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց, թե հարցումներ իրականացնող անձնակազմի և տրանս* համայնքի շրջանում ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում ինչ առաջարկությունների փաթեթ էր մշակվել, այդ առաջարկությունների արդիականությունը և իրականացումը: Քննարկումների և խմբային աշխատանքների արդյունքում մշակվեց տրանս* անձանց կարիքներին և խնդիրների ուղղված առաջարկությունների փաթեթ, ինչը պետք է հիմք հանդիսանա IBBS-2021 տրանս* անձանց շրջանում իրականացնելու համար:

Հանդիպման երկրորդ օրը ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի մասնագետները ներկայացրին IBBS-2021-ի անցկացման ձևաչափը: Ակտիվ քննարկումների արդյունքում մշակված փաթեթին ավելացվեցին IBBS-2021-ի տրանս* կարիքահեն անցկացմանն ուղղված առաջարկությունները: Մշակված առաջարկությունների փաթեթը կներկայացվի բոլոր շահագրգիռ կողմերին աշխատանքային հանդիպումից անմիջապես հետո:

Ադվոկացիոն աշխատանքային հանդիպումը միտված էր տրանս* անձանց կարիքների և խնդիրների վերհանմանը և IBBS-2021-ի տրանս* կարիքահեն իրականացմանը: Այն անցավ չափազանց ակտիվ քննարկումների և արդյունավետ երկխոսության միջավայրում:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

2021 թվականի մայիսի 26-27-ը Աղվերանում տեղի ունեցավ երկօրյա արտագնա դասընթաց բուժաշխատողների շրջանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Հիվանդությունների միջազգային դասակարգչի (ՀՄԴ) 11-րդ թարմացման վերաբերյալ: Դասընթացին մասնակցում էին Երևան քաղաքի և ՀՀ տաբեր մարզերի բժշկական հաստատությունների բուժաշխատողներ՝ ներզատաբաններ և թերապևտներ:

Դասընթացի առաջին օրը սեռականության փորձագետ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց սեռականության հիմնական տերմինները՝ «սեռ» և «գենդեր», «սեռական վարքագիծ», «սեռական կողմնորոշվածություն», «գենդերային ինքնություն», «գենդերային անհարմարվողականություն»: Փորձագետը խոսեց տրանս* անձանց խնդիրներից, տրանսսեքսուալության ապաթոլոգիզացիայի կարևորությունից և գենդերի հաստատման գործընթացից, այն փոփոխություններից, որոնց տրանս* անձինք դիմում են՝ սոցիալական (անվան փոփոխություն, հագուկապի, սանրվածքի փոփոխություն), իրավական (անձնագրում անվան, լուսանկարի փոփխություն, սեռի մասին նշումի փոփոխություն), առողջապահական (պլաստիկ վիրահատություններ, հորմոնաթերապիա, սեռափոխության վիրահատություն): Մասնակիցները քննարկեցին նաև այն խնդիրները, որոնց տրանս* անձինք բախվում են Հայաստանում գենդերային հարմարվողականության միջոցառումներ ձեռնարկելիս, և այդ խնդիրները հաստեավորելու կարևորությունից:

Դասընթացի երկրորդ օրը վարեց իրավաբան, փորձագետ Լուսինե Գասպարյանը: Նա ներկայացրեց ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրությունը ՀՄԴ-11-ի համատեքստում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և այդ կառույցի առաքելությունը, ԱՀԿ Հիվանդությունների միջազգային դասակարգիչը, խոսեց այն մասին, որ «Տրանսսեքսուալիզմ» և «Սեռական նույնականացման խանգարում» ախտորոշումները ՀՄԴ-11-ի վերանայմամբ ապաթոլոգիզացվել են և տեղափոխվել «Գենդերային անհամապատասխանություն» բաժին: Մասնագետը նաև պատմեց «Գենդերային ինքնության իրավական ճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին, այդ թվում՝ գենդերի մասին նշումի փոփոխման կարգը, ինչպես նաև գենդերային ինքնության իրավական ճանաչման գործընթացում պետական գրանցումների համար պատասխանատու մարմինների իրավասությունները:

Դասընթացը միտված էր բուժաշխատողներին տրանսսեքսուալության ապաթոլոգիզացիային և ԱՀԿ-ի Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը ծանոթացնելուն: Այն անցավ չափազանց ակտիվ քննարկումների և արդյունավետ երկխոսության միջավայրում:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՎ ՆՍՀԿ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԲՈՂՈՔԸ

2021թ-ի մայիսի 26-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում (Դատարան) դատավորներ Անդրանիկ Մնացականյանի, Միեր Արղամանյանի և Մխիթար Պապոյանի մասնակցությամբ տեղի ունեցավ տրանսգենդերանձ Է.Ա.-ի նկատմամբ սպանության փորձի գործով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանի ներկայացրած բողոքի քննությունը:

Փաստաբանը վերաքննիչ բողոքով խնդրել էր Դատարանից բեկանել և փոփոխել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021թ-ի փետրվարի 3-ի վճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր ծավալով քննության:

Բողոքի քննությանը չէր ներկայացել գործով դատախազը: Նույն օրը հրապարակվեց որոշումը, որի համաձայն Դատարանը մերժեց Արա Ղարագյոզյանի ներկայացրած բողոքը:

Գործի նախապատմությունը՝

Տրանս անձ Է. Ա.ի ծառայություններից օգտվելու նպատակով նրա բնակարան այցելած անձը, իմանալով վերջինիս գենդերային ինքնության մասին, այրել է բնակարանն ու հեռացել: Է.Ա.-ն ստացել է ծանր մարմնական վնասվածքներ և այրվածքներ: Է. Ա.-ն հրաժարվել է իր նախկին փաստաբանից և դիմել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ, որը տուժողին տրամադրել է փաստաբանի ծառայություններ՝ ի դեմս Արա Ղարագյոզյանի:

Մինչ օրս տվյալ գործով 3 անգամ փոխվել է գործով նախագահող դատավորը, ինչի հետևանքով գործի քննությունը ամեն
անգամ սկսվում էր սկզբից և ավարտին չէր մոտենում:

Ամբաստանյալը միջնորդություն է ներկայացրել արագացված դատաքննություն անցկացնելու վերաբերյալ: Մեղադրողի
կողմից դատական քննության արագացված կարգ կիրառելու դեմ առարկություն չի ներկայացվել: Չնայած տուժողի փաստաբանի կողմից ներկայացված առարկությունը և ներկայացրած հիմքերին Դատարանը 2021թ-ի հունվարի 21-ին որոշում է կայացրել արագացված դատաքննության անցկացնելու մասին:

2021թ.-ի փետվարի 3-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճռով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում և դատապարտվել է ազատազրկման: Վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի, 5 ամիս, 28 օր ժամկետով:

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառմամբ ամբաստանյալը ազատվել է հանցագործության համար նշանակված պատիժը կրելուց:

2021թ-ի մարտի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղարագյոզյանը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք, խնդրելով բեկանել և փոփոխել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր ծավալով քննության:

Վերաքննիչ դատարանի կողմից 2021թ-ի մարտի 26-ին փաստաբանի կողմից ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ:

IDAHOBIT-2021 «ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Ամեն տարի մայիսի 17-ն աշխարհում նշվում է որպես հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր:

1990թ.-ի մայիսի 17-ին նույնասեռականությունը հանվեց ԱՀԿ հիվանդությունների միջազգային դասակարգչի հոգեկան խանգարումների ցանկից:

Ահա թե ինչու է մայիսի 17-ը նշվում որպես հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր:

Այժմ՝ տասնյակ տարիներ անց, աշխարհի շատ պետություններ կատարելագործել են հոմոֆոբիայի, բիֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի մեխանիզմները և ստեղծել են անվտանգ, ատելությունից ու բռնությունից զերծ միջավայր ԼԳԲՏԻ անձանց համար: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն յուրաքանչյուր տարի անդրադարձ է կատարում օրվա խորհրդին և կազմակերպում միջոցառումներ՝ ակցիաների, քննարկումների և ասուլիսների տեսքով՝ ԼԳԲՏԻ մարդկանց հիմնախնդիրների վրա հանրային ուշադրություն հրավիրելու նպատակով:

Այս տարի՝ մայիսի 17-ին, միջոցառումն անցկացվեց «ԼԳԲՏԻ համայնքը Հայաստանում. հիմնախնդիրները, առաջընթացը և հնարավորությունները» խորագրով հանդիպում-քննարկման միջոցով:

Քննարկմանը մասնակցում էին Հայաստանում դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական մարմինների, տեղական ՀԿ-երի, համայնքահեն ՀԿ-երի և համայնքների ներկայացուցիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և ակտիվիստներ:

Քննարկման սկզբում բացման խոսքով ելույթ ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, ով շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին հրավերը ընդունելու և ներկա գտնվելու համար, կարևորեց երկխոսությունը շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան օտարերկրյա դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները՝ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփը, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպան Ջոն Գալագերը, Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխդեսպան Էլիզաբեթ Քուզին, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարի տեղակալ Յան Պլեշինգերը, Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ջորջ Մոնսանտան, Շվեյցարիայի Համադաշնության փոխդեսպան Վերներ Թյութը, Շվեդիայի Թագավորության Թագավորության փոխդեսպան Իզաբելլա Էրիկսոնը, Արգենտինայի դեսպանության ներկայացուցիչ Լաուրա Ֆրակասսան, ովքեր վերահաստատեցին իրենց պատրաստակամությունը՝ հնարավորինս օգնելու, որպեսզի Հայաստանում խարանը և խտրականությունը դուրս մղվեն հասարակությունից: Նրանք նաև անդրադարձան այն հնարավորություններին և ծրագրերին, որոնք իրենց կառույցները իրականացնում են կամ նախատեսում են ԼԳԲՏԻ անձանց և նրանց հիմնախնդիրների լուծման համար: Հանդիպմանը հյուրերը, համայնքի ներկայացուցիչները հնարավորություն ունեցան հղելու իրենց հարցերը դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներին և ստանալու պատասխաններ:

Ողջույնի խոսքերից հետո հարթակը այն անձանցն էր, որոնք հպարտության պատմություններ ունեին կիսելու լսարանի հետ:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ հպարտ են իրենց ինքնությամբ և գործունեությամբ: Ճիշտ է, եղել են ժամանակներ, երբ տարատեսակ ճնշումները զրկել են նրանց հպարտության զգացողությունից, սակայն հաղթահարել են դժվարությունները: Հպարտ իրավապաշտպան Արման Սահակյանը նշեց, որ իր համար կարևոր է Հայաստանում ամենախոցելի մարդկանց իրավունքների պաշտպանությունը:

Հպարտ տրանսգենդեր կին Սեդա Ղազարյանը նշեց, որ տրանս* անձինք անգամ ընտանիքների կողմից չեն ընդունվում, այնինչ չափազանց կարևոր է ընտանիքի աջակցությունը: Նա բազում դժվարություններ է անցել, մինչև հասել է այն բանին, որ հպարտորեն ընդունի ինքն իրեն և բոլորի առջև խոսի իր պատմության մասին:

ԼԳԲՏԻ անձանց խնդիրների մասին հպարտորեն իրազեկող Նորա Աղազարյանը նշեց, որ ինքը օգտագործում է իրական և առցանց բոլոր հարթակները հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Ճիշտ է, ազատորեն խոսելը իր անձի նկատմամբ ատելության և բռնության կոչերի է բերում, բայց դա նրան չի կանգնեցնում: Քննարկման մյուս մասնակից Հմայակ Ավետիսյանը հպարտորեն ջատագովում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությունը: Ճիշտ է, Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների մասին խոսելը խիզախություն է պահանջում, սակայն

անարդարության դեմ և հանուն հավասարության պայքարը նրան դարձրել է համարձակ ու անկոտրում:
Քննարկման վերջում մասնակիցները կիսեցին իրենց խորհուրդները բոլոր նրանց հետ, ովքեր կյանքի որևէ փուլում հուսահատ են, ընկճված, չեն ընդունում իրենց սեռականությունը և ինքնությունը:
Միջոցառումը շարունակեցին ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ և ջատագովությամբ զբաղվող ՀԿ ներկայացուցիչները, որոնք պատմեցին իրենց կազմակերպությունների գործունեության, իրականացրած ծրագրերի և ԼԳԲՏԻ անձանց տրամադրվող ծառայությունների մասին:
Ծնորհանդեսներով հանդես եկան «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, «Ֆիռլես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Նորա Աղազարյանը և «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ ծրագրերի համակարգող Հմայակ Ավետիսյանը:
Միջոցառման ավարտին տեղի ունեցավ «Հավասարության հասնելու ճանապարհին» ֆիլմի անդրանիկ ցուցադրությունը:

ՄԻԱՍԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՎ, ԱՋԱԿՑԵԼՈՎ, ԱՄՈՔԵԼՈՎ

Ձեր նմաններին չեմ սիրում, իսկ Սահմանադրությո՞ւնը

33-ամյա Աշոտն առողջական խնդիրներ ուներ: Կոկորդն էր ցավում և տնային բուժումներն օգուտ չէին տվել: Դիմում է թաղամասային պոլիկլինիկա: Մեծ է լինում նրա զարմանքը, երբ բժշկուհին ասում է՝ «քեզ չեմ ախտորոշելու»: «Նայեց ինձ, արտաքինիս ու ասաց՝ եթե քեզ հետազոտեմ, ապա դրանից հետո հիվանդ չեմ ունենա: Կասեն գոմիկների ես սպասարկում: Ու կզզվեն մոտս գան, հետո էլ, բացի դրանից, ես ձեր նմաններին չեմ սիրում»: Աշոտը փորձում է հակաճառել՝ պնդելով, որ հիպոկրատի երդվյալը խտրական վերաբերմունք չպիտի ունենա և հետո ինչի՞ց ենթադրեց, որ ինքը նույնասեռական է: «Ասեց՝ տղա ջան, հագուկապից, վրայիդ տատուներից, գնա-գնա ստեղից, կոկորդդ էլ քիչ այլ բաների համար օգտագործի՝ չի ցավա»,-հիշում է Աշոտն ու պատմում, որ մի կերպ հուզմունքը զսպելով՝ դուրս է գալիս կաբինետից:
«Հագուկապս նորմալ էր, հաստատ մերկ չէի գնացել, ուղղակի սիրում եմ մի քիչ ազատ հագնվել, գունային տարբեր համադրություններ եմ օգտագործում»,-ասում է Աշոտը՝ ավելացնելով, որ հագուկապն ու տատուները չեն կարող որոշիչ լինել՝ մարդու խառնվածքը կամ ինքնությունը իմանալու համար: Աշոտը վիրավորանքից զանգում է լրագրող ընկերոջը, վերջինս էլ ահազանգում է Առողջապահության նախարարություն: «Արդյունքում, ես հետազոտվեցի հանրապետության լավագույն բժիշկների մոտ, բայց պատկերացրեք իմ նման քանիսը կարող են լինել,

որ չունենան ծանոթներ ու ոտնահարվի նրանց իրավունքը»,–ասում է Աշոտը: Նրա խոսքով, իր շրջապատում շատերը չգիտեն իր կողմնորոշման մասին, կարծում է՝ եթե իմանան էլ, ապա ոչինչ չի փոխվի իր կյանքում: «Ես այդպիսին եմ. գուցե հիվանդություն է, գուցե կենսակերպ: Բայց այդ կարծրատիպերը, զզվանքը պիտի կամաց-կամաց փոխվի: Ես հետերոսեքսուալներին որևէ բան ասո՞ւմ եմ: Եղբա՛յր, ես այսպիսին եմ»,–ասում է Աշոտը:

Հայաստանի Մայր օրենքի՝ Սահմանադրության մեջ գեղեցիկ ձևակերպումներով ամրագրված հոդվածներ կան: Ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունում Մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Հոդված 23-ով՝ Մարդու արժանապատվությունն անխախտելի է: 29-րդ հոդվածով՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Սակայն շատ դեպքերում Սահմանադրությամբ ամրագրված մարդկանց իրավունքներն ոտնահարվում են, ինչի արդյունքում Աշոտը և շատ–շատերը հայտնվում են անելանելի վիճակում: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ–ն փորձում է աջակցել լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) համայնքի անդամներին իրենց իրավունքների պաշտպանության գործում:

Մայիսի 17-ը հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է: 2004թ.-ից միջազգային հանրությունը նշում է այս օրը՝ նպատակ ունենալով ուշադրություն հրավիրել աշխարհում լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց հանդեպ դրսևորվող բռնությանն ու խտրականությանը: Օրը խորհրդանշական է նրանով, որ 1990թ. մայիսի 17-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նույնասեռականությունը հանեց հոգեկան հիվանդությունների շարքից:

Այս տարի խորհրդանշական այդ օրը «Նոր Սերունդ»–ը կազմակերպել էր «ԼԳԲՏԻ համայնքը Հայաստանում. հիմնախնդիրները, առաջընթացը և հնարավորությունները» խորագրով հանդիպում-քննարկում, որին մասնակցեցին ևս Հայաստանում դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների, տեղական ՀԿ-երի, համայնքահեն ՀԿ-երի և համայնքների ներկայացուցիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և ակտիվիստներ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ-1: Ի՞նչ են նշանակում հոմոֆոբիա, տրանսֆոբիա, բիֆոբիա եզրույթները:

Հոմոֆոբիա–երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող անձանց և նույնասեռականության նկատմամբ: Հոմոֆոբիայի հիմքում բացասական կարծրատիպերն ու նախապաշարմունքներն են:

Տրանսֆոբիա– վախ, ատելություն ու զզվանք տրանսսեքսուալ, տրանսգենդեր կամ որպես այդպիսին ընկալվող մարդկանց նկատմամբ: Տրասնֆոբիայի հիմքում բացասական կարծրատիպերն ու նախապաշարմունքներն են:

Բիֆոբիա- երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք, խտրական վերաբերմունք բիսեքսուալ անձանց նկատմամբ: Բիֆոբիայի հիմքում բացասական կարծրատիպերն ու նախապաշարմունքներն են:

Տոնենք սիրո ուժը

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Շոմբի Շարփը, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպան Ջոն Գալագերը, Ամերիկայի Միացյալ Նահանգների փոխդեսպան Էլիզաբեթ Քուզին, ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավարի տեղակալ Յան Պլեշինգերը, Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ջորջ Մոնսանտան, Շվեյցարիայի Համադաշնության փոխդեսպան Վերներ

Թյութը, Շվեդիայի Թագավորության փոխդեսպան Իզաբելլա Էրիկսոնը, Արգենտինայի դեսպանության ներկայացուցիչ Լաուրա Ֆրակասսան մայիսի 17-ին շնորհավորեցին հայաստանյան ԼԳԲՏԻ համայնքի անդամների տոնը: Նրանց խոսքով՝ օրը իրավունքների մասին բարձրաձայնելու, դրանց համար պայքարելու հետ զուգահեռ նաև տոն է, ու պիտի շնորհավորել համարձակներին: ՄԱԿ-ի կոնվենցիաներով՝ չնայած արգելված է սեռական կողմնորոշման համար խտրականությունը, գենդերային անհավասարությունը, սակայն աշխարհում, այդ թվում Հայաստանում դեռ գերիշխում են խարանը, բռնությունը, ատելության խոսքը:

Յան Պլեշինգերի խոսքով՝ Եվրոպայում 6 չափանիշների սկզբունքներով Հայաստանը ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ խտրական վերաբերմունքով 49 պետությունների մեջ 47-ն է, ինչը այդքան էլ լավ արդյունք չէ: Ողջունելի է, որ Հայաստանն ընդունել է «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանզարոտեի կոնվենցիա), բայց անելիքներ շատ կան: Դիվանագիտական կորպուսների ներկայացուցիչները համոզմունք հայտնեցին, որ հունիսին Հայաստանում կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրությունից հետո ձևավորվող նոր կառավարությունը կընդունի անհրաժեշտ օրենսդրական փաթեթները, որոնք կբացառեն խտրականությունը:

Նախահեղափոխական և հետհեղափոխական Հայաստան

2018թ-ի Հայաստանում տեղի ունեցած թավշյա ու սիրո հեղափոխությունը Հայաստանում, ըստ իշխանությունների, շատ բան փոխեց: Արդյո՞ք ԼԳԲՏԻ համայնքի անդամները զգացին որևէ հեղափոխական, ասել է թե արմատական փոփոխություն: Ըստ «Նոր Սերունդ» ՄՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանի՝ «հեղափոխությունը մեծ առումով հասարակության կարծիքի ձևավորման վրա չի ազդել»: «Ավելին ասեմ, ինստիտուցիոնալ առումով շատ բան չի փոխվել: Հայաստանում ծայրահեղ հոմոֆոբ, տրանսֆոբ տրամադրությունները շարունակում են գերակշռող մնալ: Հասարակության տարբեր խավերի շրջանում կատարված հարցումները պարզել են, որ շատերը դեռևս ԼԳԲՏԻ անձանց վառելու, սպանելու, ոչնչացնելու կոչեր են անում, ատելության հիմքով հանցագործությունները շարունակում են իրագործվել և մնալ անպատիժ»,-ասում է Սերգեյ Գաբրիելյանը: Նրա խոսքով այս ամենի պատճառներից մեկն էլ օրենսդրական բացն է, որ պետությունը դեռևս չի ընդունում «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչը հնարավորություն կտար նաև ԼԳԲՏԻ մարդկանց դիմել դատարան, ամրագրել խախտումը: Միևնույն ժամանակ նա նշեց, որ այն ձևաչափով, ինչ մշակել է ՀՀ Արդարադատության նախարարությունը, օրենքի ընդունումը ԼԳԲՏԻ անձանց համար դարձյալ ոչ մի էական փոփոխություն չի բերի, եթե չփոխվի դատական համակարգը: «Նոր Սերունդ»-ը յուրաքանչյուր տարի հրապարակում է զեկույց, որտեղ անդադարձ է կատարվում տվյալ և/կամ նախորդ տարիների իրավախախտումների և խտրականության դրսևորումներին: «Ունենք վերլուծություն, որտեղ համեմատական է անցկացվում 2018 և 2019թթ-ին համացանցում ատելության խոսքի տարածվածությանը: Միաժամանակ մենք ամեն տարի ԵԱՀԿ ԺՄՀԻԳ-ին ուղարկած զեկույցում ներկայացնում ենք նախորդ տարվա ընթացքում արձանագրված ատելության հիմքով հանցագործությունները: Արձանագրված դեպքերի մասով պարբերաբար զեկույցներ են ուղարկվում նաև միջազգային մի շարք կառույցների»,-նշում է Սերգեյ Գաբրիելյանը: Զրուցակիցս նաև արձանագրում է, որ «պետական ապարատը փորձում է զերծ մնալ անհանդուրժող միջավայրի ստեղծումից, դրանով իսկ իր կառույցներում ԼԳԲՏԻ մարդկանց նկատմամբ խտրական վերաբերմունքը և բռնության կոչերը փորձելով հասցնել նվազագույնի»: «Համայնքը խոսելու է, համայնքը պայքարելու է, համայնքը լարված է ու պիտի հասնենք նրան, որ բոլորս ունենանք հավասար իրավունքներ»,-ասում է Սերգեյ Գաբրիելյանը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ-2: 2020թ.-ի հունվարից մինչև 2021թ. ապրիլի 30-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ–ի կողմից ԼԳԲՏԻ համայնքի անդամներին տրամադրվել է 648 իրավախորհրդատվություն: Արձանագրվել է 165 խտրականության և իրավախախտման դեպք:
Այս առնչությամբ ՀՀ ներպետական ատյաններում քննվում է 14 դատական գործ: ՄԻԵԴ-ում քննվում է 3 գործ: Կազմակերպությունը շահառուներին տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում փաստաբանի աջակցություն և դատական ներկայացուցչություն:

Հպարտ եմ ու խիզախ....

Տրանսգենդեր կին Սեդա Ղազարյանը հպարտ է իր ինքնությամբ և չի ամաչում: 17 տարեկանում իր մեջ ուժ գտավ ընտանիքի անդամներին պատմելու ինքնության մասին: «Ես հասկացա, որ չեմ կարող ապրել կեղծիքի մեջ ու երկակի կյանքով: Ես ցանկացա, որ երբ նայեմ հայելու մեջ, տեսնեմ իմ իրական կերպարը, տեսնեմ ինքս ինձ, ինչպես պատկերացնում եմ»,–ասում է Սեդան: Շատ դժվարությունների միջով է անցել, ընտանիքից առանձին է ապրել: Սեդայի խոսքով, երբեմն այլոց, կոնկրետ իր ընտանիքի անդամներին թվացել է, որ տարիներ անց կվերանա այդ հիվանդությունը: «Ասացին՝ բուժելի է, կմոռանաս այդ մասին: Առանձին ապրեցի, երկու տարի չէի խոսում ոչ մեկի հետ: Բայց 3 –րդ տարում մայրս ասաց, որ ցանկանում է հասնեմ երազանքիս՝ սեռափոխվեմ:

Ու ես մեր համայնքի բոլոր անդամներին ցանկանում եմ, որ իրենց հարազատների հետ ունենան լավ հարաբերություններ, ինչպիսին ես ունեմ մորս հետ»,–եզրափակեց Սեդան:
Նորա Աղազարյանն օգտագործում է իրական և առցանց բոլոր հարթակները հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար: Ճիշտ է, ազատ խոսելը իր անձի նկատմամբ ատելության և բռնության կոչերի է բերում, բայց դա նրան չի կանգնեցնում: «Պիտի հպարտորեն պայքարենք, պիտի կոտրենք կարծրատիպերը ու գիտակցենք, որ մեզնից էլ լավ բժիշկներ, խոհարարներ, մանկավարժներ և այլ մասնագիտությունների տեր մարդիկ կլինեն: Հպարտ լինենք ու չվախենանք խոսել մեր գենդերային ինքնության մասին, որ մեզ վերաբերվեն այնպես, ինչպես հետերոսեքսուալ մարդկանց»,–համոզված է Նորան:

Հմայակ Ավետիսյանի խոսքով, ինքը դեռ մանկուց պայքարել է խտրականության և բռնության դեմ: Ըստ նրա՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվելը չափազանց վտանգավոր է և քաջություն է պահանջում: «Էլ չեմ ասում բացահայտ ապրել այդ կյանքով, ինքնաբացահայտում անել, հարազատներին, ընկերներին պատմել ինքնության ու սեռականության մասին»,–ասում է Հմայակը: Նա համոզված է, որ ոչ մի փոփոխություն մեկ ժամում ու մեկ օրում՝ մեկ շարժումով չի լինում: «Եթե մենք ջատագովում ենք, ուրեմն պիտի խիզախ լինենք ու պատրաստ լինենք, որ մեր ճանապարհը բազում վտանգներով լեցուն է լինելու: Բայց պիտի հասնենք նրան, որ սեռականությունը մարդկանց վերաբերմունք չփոխի, որովհետև այն մեր ինքնության միայն մի բաղադրիչն է, մենք այլ արժանիքներ ևս ունենք»,–համոզված է Հմայակը:

Շարունակական և անընդհատ...

«Նոր Սերունդ » ՄՀԿ–ի ծրագրերի ղեկավար Ալինա Միրզոյանի խոսքով՝ կազմակերպությունը չի սահմանափակվում միայն հանրային միջոցառումներով: Աշխատանքը շարունակական է և կարելի է ասել՝ 24 ժամ: Խտրականության և բռնության դեմ պայքարի, մարդու իրավունքների պաշտպանության և օրենսդրական բարեփոխումների ադվոկացիային ուղղված՝ կազմակերպության գործողությունները ներառում են ռազմավարական դատավարություններ, օրենսդրական նախաձեռնություններ, ջատագովության միջոցառումներ, որպեսզի ընդունվի խտրականությունն արգելող օրենսդրություն, որում որպես խտրականության պաշտպանված հիմք՝ ուղղակիորեն նախատեսված կլինեն սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:
Մասնավորապես, լոբբինգ է արվում «Գենդերային ինքնության իրավական ճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի և ՀՀ կառավարության 2008թ. մարտի 27-ի N 276-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու համար,

ինչպես նաև օրակարգում է ՀՀ առողջապահության նախարարի 2013թ.-ի փետրվարի 7-ի N 06-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին նախագիծը, ըստ որի՝ պետք է ուժը կորցրած ճանաչել տվյալ հրամանի 2-րդ հավելվածի 1-ին հոդվածի 15-րդ կետի ա) ենթակետով սահմանված արյան դոնորության մշտական արգելքը նույնասեռական տղամարդկանց համար: «Իրազեկության բարձրացմանը եւ հակա-ԼԳԲՏԻ հռետորաբանության հակազդմանն ուղղված միջոցառումների մեջ են նաև մեդիա-արշավները, սոցիալական հոլովակները, կրթատեղեկատվական նյութերը»,–ասում է Ալինա Միրզոյանը:

Աստված սիրում է բոլորիդ

Իրավապաշտպան Արման Սահակյանը չի խուսափում ԼԳՏԲԻ համայնքի անդամների շահերը պաշտպանելուց: Իհարկե՝ շատ իրավապաշտպաններ վախենում են խարանից ու խտրականությունից: «Ես չեմ կարող հասկանալ այդ իրավապաշտպաններին: Չի կարելի իրավապաշտպանությանը մոտենալ ընտրողաբար, պիտի պաշտպանես բոլորին՝ տարբերակում չանելով»,–ասում է Արմանը: Խոստովանում է՝ աշխատանքն ու ակտիվ լինելը բերել է ընկերների ու հարազատների «կորուստի»: «Ես ԼԳՏԲԻ համայնքի խնդիրները բարձրաձայնում եմ նաև ԶԼՄ–ներով, ուստի մտերիմներս ասում են՝ բացահայտ մի արա, բայց եթե ոչ մենք, ապա ո՞վ և եթե ոչ հիմա, ապա ե՞րբ: Սա նաև պայքար է»,–համոզված է իրավապաշտպանը: Արման Սահակյանի խոսքով՝ իր աշխատանքի պատճառով «Իրավունք» թերթի կողմից համարվել է ազգի թշնամի, ու գործը հիմա ՄԻԵԴ–ում է: Այս ամենը չի կոտրում իրավապաշտպանին ու նա շարունակելու է նույն ոգով: Իսկ համայնքի ներկայացուցիչներին նա հիշեցնում է եվրոպացի բանախոսներից մեկի խոսքը. «Եթե լքված ու մերժված եք լինում, կանգնեք հայելու առաջ և ասեք՝ ես սիրուն եմ»: «Այո, մենք յուրաքանչյուրս սիրուն ենք յուրովի: Խոսքը ֆիզիկական տվյալների ու արտաքինի մասին չէ: Սիրուն ենք մեր ներքինով: Կանգնեք ու ասեք՝ այո՛, ես սիրուն եմ, ես ուժեղ եմ, ես ունեմ ապրելու հավասար իրավունքներ»,–հորդորում է իրավապաշտպանը: Իսկ քանի որ, Արմանի համոզմամբ, Հայաստանում ինքնամերժումը գալիս է նաև կրոնից՝ նա ուղղակի հիշեցնում է . **«Աստված սիրում է բոլորիդ...»**:

Արմեն Դավթյան

Այս նյութի կազմումը և հրապարակումը հնարավոր է դարձել Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Կարողությունների զարգացում և հզորացում հանուն Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության» ծրագրի շրջանակներում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է հեղինակը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի տեսակետները:

«ՀԵՏԱՊՆԴԻՐ ՎԻՐՈՒՍԸ, ՊԱՇՏՊԱՆԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ»

2021 թվականի մայիսի 17-ին Երևանում իրականացվեց «Հետապնդիր վիրուսը, պաշտպանիր մարդկանց» խորագրով արշավ, ինչին մասնակցություն ցուցաբերեցին Հայաստանում դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական մարմինների, տեղական ՀԿ-երի, համայնքահեն ՀԿ-երի և համայնքների ներկայացուցիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և ակտիվիստներ՝ իրենց սոլիդարությունը հայտնելով արշավի արժեքներին: Արշավը նպատակ ուներ խթանելու թիրախ խմբերի ակտիվ մասնակցությունը հանրային առողջության պահպանման ոլորտում և հրավիրելու որոշում կայացնողների ուշադրությունը այն խարանին և խտրականությանը, որին համայնքները բախվում են:

Համայնքների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով մասնակիցներին բաժանվեցին ՄԻԱՎ-ի և կորոնավիրուսի վերաբերյալ ինֆորմացիոն թերթիկներ, կանխարգելիչ նյութեր՝ դիմակներ և ալկոգելներ:
Ներկաները մասնակցեցին ակտիվ քննարկումների, հարց ու պատասխանի, հարցազրույցների, որոնք հետագայում ամփոփվելու են փոքրիկ ֆիլմում, և կարևորեցին իրազեկվածության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացումը:

NEW GEN
HUMANITAR
վիրուսը
COVID

ehra
eurasian harm reduction
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
հետապնդիր
ոչ մարդկանց
Chase
not people
COVID

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
ARIAN NGO
COVID

harm reduction association
ՆՈՐ
ՄԱՐԴ
հետապնդի՛ր
ոչ՝
մարդկանց
not people
COVID

ehra
eurasian harm reduction
the virus

ehra
eurasian harm reduction association
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
the virus

ehra
eurasian harm reduction association
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ
the virus
Download photos here

ehra
eurasian harm reduction association
the virus
EXCLU
NEW STYLE MAN

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շրջանակներում, 2021թ.-ի մայիս ամսվա ընթացքում իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ:

ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

SUS
Տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ
965

ԿՍԿ
Կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրող կանայք
437

ՏՐԱՆՍ անձինք
11

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐ
25

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ
20

ՄԻԱՎ ԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՊՔԵՐ
16

ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՎ-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ
- ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ

+374 60 37 89 89

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	26
ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ	9
ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ	14

Անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար զանգահարել

+374 60 47 89 89

հեռախոսահամարին, կամ այցելել ՆՍՀԿ գրասենյակ, Թումանյան 10, բն.7